ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հուլիսի 22-ից հուլիսի 26-ը ք. Եկատերինբուրգ (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Էդգար Ղազարյան - ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության պետի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Եկատերինբուրգ, հուլիսի 22-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

ՌԴ Դաշնային մաքսային ծառայության կենտրոնական փորձագիտաքրեագիտական վարչություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել փորձագիտական գործունեության խնդրահարույց հարցերին վերաբերող 13-րդ միջազգային գիտապրակտիկ համաժողովին, քանի որ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքով նախատեսվում է, որ մաքսային գործի իրականացման նպատակներով ապրանքների փորձաքննության և հետազոտության համար ՀՀ կառավարությունը կարող է ստեղծել մաքսային լաբորատորիաներ, գիտահետազոտական հիմնարկներ, տվյալների մշակման կենտրոններ և այլ կազմակերպություններ:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. հուլիսի 22-ից 26-ը կայացած համաժողովի ծրագիրը ներառում էր փորձագիտական պրակտիկային վերաբերող այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝

- սննդային արտադրանք,
- նավթ և նավթամթերք,
- հանքային արտադրանք,
- թեթև արդյունաբերության ապրանքներ,
- օրգանական ծագման ապրանքներ, պոլիմերներ,
- մետաղներ և համաձուլվածքներ, թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր, կերամիկական արտադրանք, ապակի և դրանցից պատրաստված արտադրանք,

- թմրանյութերի հետազոտում,
- մտավոր սեփականության օբյեկտների ուսումնասիրություն,
- մշակութային արտադրանքի փորձաքննություններ,
- հոգեբանալեզվաբանական փորձաքննություններ
- փորձագիտական ինստիտուտի զարգացմանը վերաբերող ընդհանուր հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Եկատերինբուրգում անցկացվող միջոցառմանը մասնակցել են աշխարհի տարբեր պետությունների մաքսային ոլորտի ներկայացուցիչներ : Քննարկվել են փորձագիտական ոլորտին առնչվող հարցեր: Համաժողովի ընթացքում ելույթ ունեցան ՌԴ փորձագիտական ոլորտի տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ և ներկայացուցիչներ: Հնդկաստանի մաքսային կցորդը ներկայացրեց փորձագիտական գործունեությանն առնչվող իրենց ձեռքբերումներն ու կիրառվող մեթոդները, ինչպես նաև հայտնեց օգոստոսի 22-26ը ՀՀ պլանավորված այցի մասին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՌԴ Դաշնային մաքսային ծառայության կենտրոնական փորձագիտաքրեագիտական վարչության պետն իր աջակցությունն է հայտնել՝ օժանդակել անհրաժեշտ ուսումնական ձեռնարկներով, կիրառվող փորձով և մեթոդներով, ձեռք բերված հմտություններով , եթե ՀՀ ՊԵԿ-ում ստեղծվի համապատասխան լաբորատորիա կամ փորձագիտական ստորաբաժանում:

Համաժողովին մասնակցությունը հնարավորություն ընձեռեց նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, գնահատելու մաքսային լաբորատորիաների և փորձագիտական ստորաբաժանումների ստեղծման , դրանց արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը,ինչպես նաև հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Էդգար Ղազարյան

30.07.2024թ